«Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մայիսի 5-ի թիվ 670-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ 2023 թվականի N ____ -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի N 670-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի «Կենսաթոշակ վճարելու կարգը հաստատելու մասին» N 670-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) 1-ին կետի 4-րդ ենթակետը, 2-րդ կետի 9-րդ ենթակետը և N 4 հավելվածը ճանաչել ուժը կորցրած։
2. Որոշման N 1 հավելվածում՝

- 2-րդ կետի 11-րդ ենթակետը, 2-րդ, 6.7-րդ, 8.2-րդ, 8.3-րդ, 16.5-րդ և 16.6-րդ կետերը ճանաչել ուժը կորցրած.
- 3-րդ կետից, 6-րդ կետի 3-րդ ենթակետից, 8.4-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերից, 8.5-րդ կետից և 12-րդ կետից հանել «կամ Ազգային օպերատորի» բառերը.
- 4-րդ կետի 2-րդ նախադասությունից հանել «կամ ազգային օպերատորը կամ կազմակերպությունը» բառերը և 3-5-րդ նախադասությունները.
- 6-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) նշում այն մասին, որ դիմողը տեղեկացված է բանկ ներկայանալու և բանկի հետ համապատասխան բանկային հաշվի պայմանագիր կնքելու անհրաժեշտության, ինչպես նաև տարեկան մեկ անգամ՝ ոչ ուշ, քան վերջին անգամ բանկ ներկայանալու ամսվան հաջորդող 12-րդ ամսվա վերջին աշխատանքային օրը, իր՝ Հայաստանի Հանրապետությունում լինելը բանկին հավաստելու պարտավորության մասին (կենսաթոշակի գումարն անկանխիկ եղանակով վճարվելու դեպքում)։».

- 3-րդ, 6.5-րդ, 6.6-րդ և 7-րդ կետերից հանել «կամ ազգային օպերատորը կամ կազմակերպությունը» բառերը.
- 3-րդ կետի 1-ին նախադասությունից հանել «աշխատող» բառը.
- 6-րդ կետից հանել 2-րդ նախադասությունը.
- 8-րդ կետի 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Կենսաթոշակն ստանալու եղանակը կամ բանկը փոխելու դիմումը մերժվում է, եթե դիմելու օրվա դրությամբ կենսաթոշակի վճարումը դադարեցված է կամ «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կենսաթոշակառուին կենսաթոշակը չի կարող վճարվել անկանխիկ եղանակով։».

- 7-րդ կետից հանել «(բանկին, ազգային օպերատորին կամ կազմակերպությանը)» և «կամ ազգային օպերատորը կամ կազմակերպությունը» բառերը.
- 1-ին կետում «համապատասխան մարմնի համակարգի վճարման նախնական ցուցակը (այսուհետ՝ նախնական ցուցակ)՝ էլեկտրոնային տարբերակով։ Նախնական ցուցակը պահպանվում է շտեմարանում և հասանելի է համապատասխան մարմնին՝ դիտելու հնարավորությամբ» բառերը փոխարինել «վճարման ցուցակ» բառերով.
- 4-րդ կետի 4-րդ ենթակետից հանել «կամ ազգային օպերատորի (եթե միանվագ դրամական վճարի գումարը պետք է վճարվի ազգային օպերատորի միջոցով)» բառերը.
- 5-րդ կետից հանել «կամ ազգային օպերատորին», «կամ ազգային օպերատորի» և «կամ ազգային օպերատորից» բառերը.
- 9-րդ և 10-րդ կետերից հանել «կամ ազգային օպերատորի մոտ բացված հաշվարկային հաշվին» բառերը.
- 11-րդ կետից հանել «, ինչպես նաև կենսաթոշակներն ազգային օպերատորի միջոցով անկանխիկ եղանակով վճարելու ծառայությունների մատուցման պայմանագրով» բառերը.
- 14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«14. Սույն կարգով և պայմանագրով սահմանված ժամկետներում ու կարգով ծառայությունը բանկին է տրամադրում էլեկտրոնային վճարման ցուցակը և գանձապետարանի միջոցով վճարման ենթակա գումարը փոխանցում է բանկին, որն ապահովում է կենսաթոշակի գումարի մուտքագրումը կենսաթոշակառուի բանկային հաշվին։».

- 15-րդ կետից հանել «կամ ազգային օպերատորին» բառերը.
- 1-ին կետից հանել «(բանկի կամ ազգային օպերատորի)» բառերը.
- 2-րդ կետից հանել «(բանկը կամ ազգային օպերատորը)» բառերը.

- 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«16.4. «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 55-րդ հոդվածով սահմանված՝ կենսաթոշակի վճարումը կանխիկ եղանակով շարունակելու ժամկետները լրանալուց հետո անձի ֆունկցիոնալությունը գնահատող հանձնաժողովից (բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնից) ստացված՝ հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված լինելու վերաբերյալ տեղեկանքի հիման վրա, առանց կենսաթոշակառուի գրավոր դիմումի կենսաթոշակ վճարելը վերսկսելու դեպքում, եթե մինչև կենսաթոշակի վճարումը դադարեցնելը՝

1) կենսաթոշակը վճարվել է անկանխիկ եղանակով, ապա վճարող կազմակերպությունը չի փոխվում.

2) կենսաթոշակը վճարվել է կանխիկ եղանակով, ապա կենսաթոշակի վճարումը շարունակվում է անկանխիկ եղանակով սույն կարգի 16.2-րդ և 16.3-րդ կետերով սահմանված կարգով։».

- 39-րդ կետից հանել «(եթե կենսաթոշակն անկանխիկ եղանակով վճարվում է բանկի միջոցով) կամ հաշվարկային հաշվին (եթե կենսաթոշակն անկանխիկ եղանակով վճարվում է ազգային օպերատորի միջոցով)» բառերը.
- 40-րդ կետից հանել «(եթե կենսաթոշակն անկանխիկ եղանակով վճարվում է բանկի միջոցով) կամ հաշվարկային հաշվին (եթե կենսաթոշակն անկանխիկ եղանակով վճարվում է ազգային օպերատորի միջոցով)» բառերը.
- 47-րդ կետում «վճարվում է» բառը փոխարինել «վճարվել է» բառով։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2023 թվականից հետո ծագած հարաբերությունների վրա։